ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՄՀ-Հայաստանի գնումների

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ - 2007

Հայաստան, Երևան 0001, Բելյակովի փ. 9

Հեռ.՝ (374 10) 585578, 526914 ● Ֆաքս՝ (374 10) 547460

crd@transparency.am ● www.transparency.am

ՀՄՀ-Հայաստանի գնումների

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ - 2007

Սույն ուսումնասիրությունը ֆինանսավորվել է Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղի կողմից:

Ծրագրի աշխատակազմ

Սոնա Այվազյան
տնօրեն

Լևոն Հովսեփյան
գնումների հարցերով փորձագետ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 6

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 9

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 18

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԹԻ	Թրանսպարենսի Ինթերնեշնլ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՄԿ	Հազարամյակի մարտահրավեր կորպորացիա
ՀՄՀ	Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ
ՄԶԳ	Միջազգային զարգացման գործակալություն
ՄՆՄԶԳ	Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՎԶՄԲ	Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ
ՏԶԿ/ԹԻ Հայաստան	Տարածաշրջանային զարգացման կենտրոն/ Թրանսպարենսի Ինթերնեշնլ - Հայաստան
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2006թ. մարտ ամսին «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիան (ՀՄԿ) ստորագրել է 235.65 միլիոն ԱՄՆ դոլարի պայմանագիր Հայաստանի Հանրապետության կառավարության հետ (այսուհետ, *Պայմանագիր*), որով նախատեսվում է նպաստել աղքատության հաղթահարմանը Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում կայուն աճի ապահովման միջոցով: *Պայմանագիրը* նախատեսում է գյուղական ճանապարհների ու ոռոգման ենթակառուցվածքների բարելավման և տեխնիկական ու ֆինանսական աջակցության նպատակով հինգ տարով դրամաշնորհի տրամադրում՝ բարելավելու ջրամատակարարումը և ֆերմերային տնտեսությունների ու ագրոբիզնեսի զարգացումը: *Պայմանագիրը*, որն ուժի մեջ է մտել 2006թ. սեպտեմբերին, իրականացվում է «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի (ՀՄՀ) հայաստանյան գրասենյակի կողմից. այն պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) է, հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, աշխատում է նրա համար և նրա անունից:

Պայմանագրի իրականացման ընթացքում ՀՄՀ-Հայաստանը նախատեսում է ձեռք բերել, մասնավորապես, ճանապարհների և ոռոգման ենթկառուցվածքների շինարարությանն առնչվող տարբեր ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ: Թրանսփարենսի Ինթերնեշնլի (ԹԻ)՝ աշխարհով մեկ իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրային գնումներն ու հանրային ծախսերն այն ոլորտներից են, որոնք պարունակում են կոռուպցիոն ամենաբարձր ռիսկեր: Կոռուպցիոն ռիսկերը կարող են ի հայտ գալ վաղ փուլերում, օրինակ՝ պլանավորման և բնութագրերի նախագծման գործընթացներում, շարունակվել մրցույթների և պայմանագրերի կնքման ընթացքում, պահպանվել պայմանագրի իրականացման և վերահսկման ժամանակ, իսկ կոռուպցիայի հետևանքները կարող են ի հայտ գալ ծրագրերի ավարտից հետո: Այսպիսով, չափազանց կարևոր է հանրային գնումների ոլորտում կոռուպցիան կանխելու ուղղությամբ հատուկ միջոցառումների իրականացումը:

Մինչ իրավակիրարկումը և վերահսկողությունը հանդիսանում են կարևոր գործոններ հանրային գնումների ոլորտում «օրինավորությունն» ապահովելու համար, գործընթացների թափանցիկությունը համարվում է ամենաարդյունավետ

հակակոռուպցիոն կանխարգելիչ մեխանիզմը, որը խթանում է հաշվետվողականությունը, օժանդակում վերահսկողությունը և քաղաքացիների մասնակցությունը կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման գործընթացներում:

ՀՄՀ-Հայաստանի գնումների մոնիտորինգն իրականացվել է 2007թ. ընթացքում «Տարածաշրջանային զարգացման կենտրոն / Թրանսփարենսի Ինթերնեշնլ - Հայաստան» (ՏԶԿ/ԹԻ-Հայաստան) հասարակական կազմակերպության (ՀԿ) կողմից: Մոնիտորինգը ներառել է ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված գնումների վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրությունը և գնումների գործընթացների թափանցիկության վերաբերյալ ընդհանուր դիտարկումներ: Մոնիտորինգն անդրադարձել է տեղեկատվության մատչելիության, մրցակցային հնարավորությունների, շահերի բախման, բողոքարկման մեխանիզմների, կոռուպցիոն ռիսկերի և այլ առնչվող հարցերի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՄՀ-Հայաստանի գնումների գործընթացների մոնիտորինգի մեթոդաբանության նպատակն էր դիտարկել և գնահատել համապատասխան գնումների գործընթացների թափանցիկությունն ու համապատասխանությունը *Պայմանագրին* և վերջինիս շրջանակում 2007թ. սեպտեմբերի 26-ին ՀՄԿ-ի և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի միջև ստորագրված *Գնումային համաձայնագրին* (այսուհետ՝ *Գնումային համաձայնագիր*):

ՏԶԿ/ԹԻ-Հայաստանը որդեգրել է գնումների գործընթացները հասարակության տեսանկյունից մոնիտորինգի ենթարկելու մոտեցում՝ օգտվելով ինտերնետային կայքի առկայությունից և քաղաքացիների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքից: Մեթոդաբանությունը նախատեսում է, որ ՀՄՀ-Հայաստանից պահանջվեն այնպիսի փաստաթղթեր, որոնք մատչելի են մրցույթների մասնակիցների համար: ՏԶԿ/ԹԻ-Հայաստանը ձեռնպահ է մնացել այնպիսի փաստաթղթեր խնդրելուց, որոնք չեն առնչվում մոնիտորինգի առարկային:

Մոնիտորինգի մեթոդաբանության համաձայն ուսումնասիրվել են գնումների ցիկլի մի քանի ասպեկտներ/փուլեր, ներառյալ՝ գնումների գործընթացները

կարգավորող փաստաթղթերը, գնումների պլանավորումը, մրցույթների նախապատրաստումը, մրցույթների իրականացումը և գնահատումը:

- ՀՄՀ-Հայաստանի գնումների ուղեցույցները (գործընթացը կարգավորող փաստաթղթերը) ուսումնասիրվել են՝ հիմք ընդունելով դրանց պարզությունը, մատչելիությունը լայն հասարակության համար և/կամ հղումները հրապարակային հանդիսացող փաստաթղթերին: *Պայմանագրի* համաձայն ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները կատարվում են Գնումների պայմանագրի «Հավելված 1. Գնումների ուղենիշների» համաձայն, որոնց հիմքում ընկած են Համաշխարհային բանկի փաստաթղթերով *«Ուղենիշներ. Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության և աշխատանքի ներգրավման կարգը, 2004թ. մայիս»* և *«Ուղենիշներ. ՎՁՄԲ վարկերի և ՄՁԳ վարկերի շրջանակներում գնումների կարգը, 2004թ. մայիս»* (համատեղ՝ *ՀԲ Գնումների ուղենիշներ*) սահմանված սկզբունքները, կանոնները և ընթացակարգերը: Ըստ այդմ, մոնիտորինգը հաշվի է առել ինչպես *Գնումային համաձայնագրի,* այնպես էլ *ՀԲ Գնումների ուղենիշների* դրույթները:

- Պլանավորումն ուսումնասիրվել է ՀՄՀ-Հայաստան ինտերնետային կայքում զետեղված գնումների պլանների հիման վրա՝ հաշվի առնելով դրանց կողմից *Գնումային համաձայնագրով* նախատեսված մանրամասների ընդգրկումը և լայն հասարակության համար մատչելիությունը:

- Մրցույթային հրավերների փաթեթներն ուսումնասիրվել են՝ հիմք ընդունելով դրանց՝ գնումների ուղեցույցերով սահմանված դրույթներին համապատասխանությունը, մրցույթներին մասնակցելու համար բոլոր անհրաժեշտ մանրամասների տրամադրումը, բաց մրցակցության հիմքերի և բոլոր հնարավոր մասնակիցների համար հավասար հնարավորությունների ապահովումը, անկողմնակալությունը և կեղծիքների կամ կոռուպցիոն գործընթացների կանխարգելումը, շահերի բախման իրավիճակների բացառումը: Այս նպատակով ուսումնասիրվել են հայտերի հրավերները, որոնք պարունակում են

մասնակիցներին ուղղված հրահանգներ, պայմանագրի իրականացման պայմաններ, գնման առարկայի բնութագրեր կամ աշխատանքի նկարագրություն կամ տեխնիկական առաջադրանք և առաջադրված պահանջների ժամանակացույցեր:

- Մրցույթների իրականացումը դիտարկվել է՝ հիմք ընդունելով դրանց՝ ուղենիշներին համապատասխանությունը և բոլոր մասնակիցների համար մրցույթային փաստաթղթերի մատչելիությունը, անկողմնակալությունը և բոլոր հնարավոր մասնակիցների համար հավասար հնարավորությունների ընձեռումը, շահերի բախման կանխարգելումը: Այս դիտարկումներն արվել են մրցույթի բոլոր մասնակիցներին տրամադրված լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև պարզաբանումների/փոփոխությունների ուսումնասիրության արդյունքում:
- Գնահատման ընթացակարգերը մոնիտորինգի են ենթարկվել՝ հիմք ընդունելով փաթեթների բացումը մրցույթային հրավերում նշված տեղում և ժամկետներում, հայտերի գնահատումը անկախ և պրո ֆեսիոնալ հանձնաժողովի կողմից, մրցույթային հրավերում/ուղեցույցերում նշված ընթացակարգերի պահպանումը և շահերի բախման դեպքերի կանխարգելումը: Մոնիտորինգն արվել է ուսումնասիրելով գնահատման հաշվետվությունները, որոնք նաև ներառել են մասնակիցների հետ թղթակցության վերաբերյալ տվյալներ:

Մեթոդաբանությունը նախատեսել է, որ փաստաթղթերը հաղորդակցության էլեկտրոնային եղանակով տրամադրվեն ՏԶԿ/ԹԻ-Հայաստանին՝ վերջինիս կողմից նման խնդրանք ներկայացնելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում: Նախատեսվել է նաև, որ ՀՄՀ-Հայաստանը որևէ անձի լիազորի ձեռք բերված պայմանավորվածության համաձայն կանոնավոր կերպով հաղորդակցվելու ՏԶԿ/ԹԻ-Հայաստանի հետ և տրամադրելու անհրաժեշտ փաստաթղթերը:

Այս մեթոդաբանությունը համագործակից ՀԿ-ի (Համայնքների ֆինանսիստների միավորման) կողմից իրականացվող մոնիտորինգի ծրագրի հետ մեկտեղ ներկայացվել է ՀՄՀ-Հայաստանի աշխատակազմին ու համատեղ քննարկվել

2007թ. փետրվարին, ինչպես նաև՝ 2007թ. մարտին ՀՄԿ-ին և Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալությանը (ՄՆՄԶԳ): Ի հավելումն այս հանդիպումների՝ մոնիտորինգի մեթոդաբանության վերաբերյալ պաշտոնական նամակագրություն է տարվել և աշխատանքային հանդիպում է կայացել ՀՄՀ-Հայաստանի գնումների մասնագետի հետ՝ հաղորդակցությանն առնչվող կոնկրետ քայլերի և տվյալների հավաքագրման վերաբերյալ: Մասնավորապես, այս հանդիպման արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել առ այն, որ փաստաթղթերը ՏԶԿ/ԹԻ-Հայաստանին կտրամադրվեն պայմանագրերի կնքումից և դրանց հրապարակումից հետո:

Միաժամանակ, ՏԶԿ/ԹԻ-Հայաստանն ուսումնասիրել է տեղական մամուլը՝ ՀՄՀ-Հայաստանի ծրագրի առաջընթացի, Կառավարման խորհրդի հանդիպումների, մրցույթային հայտարարությունների և այլ հարցերի վերաբերյալ լուսաբանումներին ծանոթանալու նպատակով: Ծրագրի աշխատակազմը նաև պարբերաբար այցելել է ՀՄՀ-Հայաստանի և ՀՄԿ-ի ինտերնետային կայքերը, ինչպես նաև Համաշխարհային զարգացման կենտրոնի «ՀՄՀ մոնիտոր» բլոգը (blogs.cgdev.org/mca-monitor): ՏԶԿ/ԹԻ-Հայաստանի ներկայացուցիչները նաև մասնակցել են ՀՄՀ-Հայաստանի Շահառուների խորհրդի նիստերին, որոնք ոչ անդամ ՀԿ-ների համար բաց են դարձել 2007թ. փետրվարի 1-ից, և հաղորդակցվել այլ շահագրգիռ ՀԿ-ների հետ՝ քննարկելու ծրագրի առաջընթացը:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀՄՀ-Հայաստանի ինտերնետային կայքը (www.mca.am) նախատեսված է տրամադրելու տեղեկություններ գնումների ուղեցույցների, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված և արխիվացված մրցույթների, գնումների պլանների, կնքված պայմանագրերի և վիճարկված դեպքերի մասին: Ոչ մրցակցային եղանակներով իրականացված գնումների մասին տվյալները ինտերնետային կայքում չեն զետեղվում:

Գնումների մեծ մասի համար ՀՄՀ-Հայաստանը ՏԶԿ/ԹԻ-Հայաստանին տրամադրել է մրցույթի հրավերները և գնահատման հաշվետվությունները, իսկ որոշների համար նաև՝ հետաքրքրվածություն արտահայտելու հրավերները, գնանշման հրավերը և պայմանագրերի նախագծերը: Որոշ փաստաթղթեր

տրամադրվել են երկու աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես և նախատեսված էր երկու կազմակերպությունների միջև պայմանավորվածության համաձայն, իսկ մյուս փաստաթղթերը ներկայացվել են մինչև 20 օր ուշացումով:

2007թ. ընթացքում ՏԶԿ/ԹԻ-Հայաստանը ուսումնասիրել է ՀՄՀ-Հայաստանի ծրագրով իրականացված՝ հետևյալ գնումներին առնչվող փաստաթղթերը.

1. Ավտոմեքենա
2. Բանկային գործակալ
3. Ճանապարհների տեխնիկատնտեսական հիմնավորում և նախագծում
4. «Ձրից դեպի շուկա» բաղադրիչն իրականացնող կազմակերպություն
5. Ոռոգման նոր ջրամբարների կառուցման նպատակով տեխնիկական և տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրություն
6. Վեց մայր ջրանցքների նախագծում և շինարարության վերահսկում
7. Ազդեցության գնահատման նպատակով գյուղացիական տնտեսությունների հետազոտության նախագծում և իրականացում
8. Բնապահպանական և սոցիալական գնահատում և վերահսկում

ՏԶԿ/ԹԻ-Հայաստանի կողմից բացահայտված հիմնախնդիրները ներառել են ինչպես գնումների կանոնակարգմանն ու պլանավորմանն առնչվող ընդհանուր բնույթի խնդիրներ, այնպես էլ գնումների գործընթացների հետ կապված կոնկրետ մտահոգություններ:

Ուղեցույցներ

Մոնիտորինգը ցույց է տվել, որ առկա չեն *Պայմանագրի* շրջանակներում կատարվող գնումների ընդգրկուն և հրապարակային ուղեցույցներ: *Գնումային համաձայնագրով* սահմանվող դրույթները հղում են կատարում *ՀԲ գնումների ուղենիշներին* և ուրվագծում դրանց որոշակի փոփոխություններ ՀՄՀ-Հայաստան ծրագրի համար: Նման պրակտիկան խոչընդոտներ է ստեղծում հասարակական

մոնիտորինգի համար և ՏՁԿ/ԹԻ-Հայաստանի կողմից չի դիտարկվում որպես արդյունավետ, թափանցիկ կամ կիրառման համար դյուրին միջոց:

- Որպեսզի անձը ծանոթանա, թե ինչպիսի կարգով են կատարվում ՀՄՀ-Հայաստան ծրագրի գնումները, նա պետք է կատարի խրթին և ավելորդ աշխատանք՝ ետ ու առաջ թերթելով ՀՄՀ-Հայաստանի ինտերնետային կայքում առկա՝ *Գնումային համաձայնագիրը* և ՀԲ ինտերնետային կայքում առկա՝ *ՀԲ գնումային ուղենիշները*՝ մտապահելով փոփոխությունները կամ ինքնուրույն համադրելով դրանք:

- ՀՄՀ-Հայաստանի *Գնումային համաձայնագիրն* առկա է անգլերեն և հայերեն լեզուներով, մինչդեռ *ՀԲ գնումային ուղենիշները* մատչելի են անգլերեն և ռուսերեն լեզուներով: Այսպիսով, առաջադրանքն էլ ավելի է բարդանում հայալեզու կամ ռուսալեզու անձի համար, որը պետք է թարգմանի այս փաստաթղթերից մեկը ռուսերենից հայերեն կամ ընդհակառակը:

- 2007թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով ՀՄՀ-Հայաստանի ինտերնետային կայքում չի եղել ընդգրկուն կարգավորող փաստաթուղթ, չնայած որ կայքի բացման օրվանից այն պարունակել է հղում՝ գնումների ուղեցույցներ:

Պլանավորում

Գնումային համաձայնագրի համապատասխան գնումների պլանները պետք է մշակվեն և ընդունվեն կիսամյակը մեկ անգամ և հրապարակվեն ՀՄՀ-Հայաստանի ինտերնետային կայքում, «Development Gateway Market»-ի կայքում (www.dgmarket.com), Միավորված ազգերի կազմակերպության «Development Business» կայքում (www.devbusiness.com), ինչպես նաև Հայաստանում լայնորեն տարածվող օրաթերթում: Այս պլանները նախատեսված են՝ բացահայտելու ապրանքների, աշխատանքների և ծառայությունների կարիքները վեցամսյա ժամկետի համար, դրանց գնումների համար առաջարկվող մեթոդները և նախատեսված ծախսերը: Գնումների պլաններից շեղումները նախապես համաձայնեցվում են ՀՄԿ-ի հետ:

Գնումների պլանների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանք չեն արտացոլում գնումների գործողությունների ժամանակացույցը, ինչը դժվարացնում է մոնիտորինգը: Գնումների պլանները ոչ մի տեղեկություն չեն տալիս արդեն իսկ մեկնարկած գործընթացների կամ հետաձգված գնումների վերաբերյալ: Այսպիսով, որպեսզի որևէ մեկը կարողանա պատկերացում ունենալ գնումների գործընթացի կարգավիճակի վերաբերյալ, ապա նա պետք է համադրի վերջին պլանները՝ պարզելու, թե նախորդ պլանի որ կետերը չեն հայտնվել հաջորդում, ինչպես նաև հետևի գնումների վերաբերյալ հայտարարություններին և դրանց ժամանակացույցերին: Նման ձևաչափը բավականին շփոթեցնող է և չի նպաստում գնումների գործընթացների թափանցիկությանը:

Մրցույթների նախապատրաստում

Մի շարք մտահոգություններ առնչվում են ոչ ճշգրիտ ձևակերպված մրցույթային պահանջներին, մրցույթների մասնակիցներին տրամադրվող ոչ պատշաճ տեղեկություններին, անհամապատասխան տվյալներին և գնման համար ընտրված մեթոդներին:

- ՀՄՀ-Հայաստանը տվել է ոչ ճիշտ և ոչ լիարժեք տվյալներ **Ավտոմեքենայի** գնման մրցույթի մասնակիցներին: Գնային առաջարկ ներկայացնելու հրավերը սահմանել է, որ այդ փաստաթղթում նշված տեխնիկական բնութագրերը կարող են «ունենալ աննշան շեղումներ», սակայն այն չի հստակեցրել, թե ինչ կարող է նշանակել «աննշան» բառը: Օրինակ, կարո՞ղ է արդյոք 5-դռնանի մեքենան դառնալ 4-դռնանի: Կարո՞ղ է արդյոք նստատեղերի քանակը փոխվել 5-7 մարդու համար նախատեսվածից 4-6-ի: Կարո՞ղ է արդյոք վառելիքի բաքի տարողությունը փոխվել 60-80 լիտրից 58-ի: Կարո՞ղ է արդյոք ավտոմեքենայի 4 ձայնասփյուռը դառնալ 2 և այլն: Մինչդեռ, նման շեղումների մի մասը կարող էր էականորեն ազդել գնի վրա և նման անհստակությունը կարող էր սահմանափակել մասնակցությունը այս գնանշման մրցույթին:

- **Բանկային գործակալի** ծառայության մրցույթի հայտ ներկայացնելու հրավերը առաջադրել է պահանջ, ըստ որի ծառայության մատուցման սակագները և մուծումները պետք է արտահայտվեն ԱՄՆ դոլարով,

մինչդեռ բանկերի մեծամասնությունն աշխարհում, որպես կանոն, օգտագործում է սակագների և մուծումների տոկոսային արտահայտությունը: Երկու բանկ - «Հայէկոնոմբանկ» փակ բանետիրական ընկերությունը (ՓԲԸ) և «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն իրենց սակագները ներկայացրել են գործարքների արժեքի տոկոսի տեսքով և այդ պատճառով մերժվել են: Այսպիսով, հայտ ներկայացնելու հրավերով սահմանված ոչ ճիշտ պահանջը սահմանափակել է մրցակցությունը այս գնման համար:

- **Ազդեցության գնահատման նպատակով գյուղացիական տնտեսությունների հետազոտության** գնումն իրականացվել է խորհրդատուի որակավորման հիման վրա կատարվող ընտրությամբ, մինչդեռ սովորաբար այս մեթոդն օգտագործվում է այն գնումների համար, որոնք փոքր են, որտեղ պահանջը բավականին կոնկրետ է և որտեղ պայմանագրի գինն այնքան կարևոր չէ, որքան պայմանագրի շնորհումը որակյալ ընկերությանը: Այսպիսով, գնում իրականացնող կառույցը պատրաստ է բանակցել ցանկացած գնի կապակցությամբ, որն առաջարկում է ընտրված մասնակիցը, քանի որ համարվում է, որ վերջինս ունի առանձնահատուկ փորձ այս ոլորտում: Մինչդեռ, տվյալ ձեռքբերվող ծառայությունն ընդամենը սոցիոլոգիական հարցում էր և գոյություն ունեն բազմաթիվ կազմակերպություններ, որոնք որակավորված են նման առաջադրանքի համար:

- Ինչպես պարզվել է **Վեց մայր ջրանցքների նախագծման և շինարարության վերահսկման** գնման գնահատման փուլում, հայտ ներկայացրած երեք ընկերությունների կողմից առաջարկված ամենացածր և ամենաբարձր գներն իրարից տարբերվել են ավելի քան չորս անգամ, իսկ երկու առավել ցածր գները՝ համարյա երեք անգամ: Նման տարբերության պատճառներից մեկը կարող է հանդիսանալ մրցույթային հրավերի և դրանում տրամադրվող տվյալների անորոշությունը: Նման ենթադրության համար հիմք է տալիս նաև այն փաստը, որ մասնակիցները տվել են բազմաթիվ հարցեր և կարճ ցուցակում հայտնված մասնակիցների միայն կեսն են ներկայացրել հայտեր: Ի վերջո, պայմանագիրը կնքվել է տեղական մի ընկերության հետ («Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ), որն ամենայն հավանականությամբ տիրապետել է ավելի շատ

տեղեկության, հաշվի առնելով բազմաթիվ տարիների փորձն այս ոլորտում, և առաջարկել է ավելի ցածր գին:

- **Վեց մայր ջրանցքների նախագծման և շինարարության վերահսկման** հայտ ներկայացնելու հրավերը չի առաջադրել չափանիշներ ցանկալի փորձառության, աշխատակազմի որակավորման, մոտեցումների և այլնի վերաբերյալ: Չնայած որ այս փաստաթուղթը տվել է յուրաքանչյուր չափանիշի առավելագույն արժեքի վերաբերյալ տեղեկություն, պարզ չէ, թե որոնք են եղել առաջարկի տեխնիկական մասի համար առավելագույն միավորներ ստանալու բավարար պահանջները:

Մրցույթային ընթացակարգեր

Մրցույթային ընթացակարգերի իրականացման ընթացքում եղել են դեպքեր, երբ ոչ պատշաճ ժամանակ է տրամադրվել հայտերի մշակման համար, բացահայտվել է բյուջեի չափը և ուշ են ներկայացվել հայտերը:

- **Բանկային գործակալի** ծառայության մրցույթի համար մասնակիցներին բավարար ժամանակ չի տրամադրվել հայտերի պատրաստման համար: Չնայած որ ՀՄՀ-Հայաստանի կողմից կիրառվող ուղենիշները պահանջում են, որ «առաջադրանքի համար տրվող ժամանակը պետք է բխի առաջադրանքից, բայց, որպես կանոն, չպետք է պակաս լինի չորս շաբաթից կամ ավել երեք ամսից», 28 նվազագույն օրվա փոխարեն մրցույթի մասնակիցներին տրվել է միայն 15 օր: Մինչդեռ, հնարավոր է, որ ավելի շատ ընկերություններ մասնակցեին մրցույթին, եթե լիներ ավելի շատ ժամանակ նախապատրաստվելու համար: Հնարավոր է նաև, որ մերժում ստացած ընկերությունները, եթե ունենային պատշաճ ժամանակ, կարող էին պատրաստել ավելի բարձրորակ առաջարկներ: Այսպիսով, տվյալ մրցույթի գնահատման արդյունքում կարող էր ստացվել լիովին այլ պատկեր:

- **Ոռոգման նոր ջրամբարների կառուցման նպատակով տեխնիկական և տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրության** մրցույթի ժամանակ առկա բյուջեի մասին տեղեկությունը տրամադրվել է հնարավոր մասնակիցներին մինչև առաջարկների ներկայացման վերջնաժամկետը:

Նման մոտեցումը կարող է հանգեցնել հայտերի գնի արհեստական աճի և/կամ հայտերի քանակի նվազեցման ու սահմանափակ մրցակցության: Արդյունքում, տվյալ մրցույթի մասնակիցների կարճ ցուցակում ընդգրկված 8 ընկերություններից միայն 2-ն են ի վերջո ներկայացրել հայտ:

- **Ազդեցության գնահատման նպատակով գյուղացիական տնտեսությունների հետազոտության** գնահատման հաշվետվության մեջ նշվել է, որ առկա է եղել հետաքրքրվածության արտահայտման ուշ ներկայացման դեպք, սակայն չի նշվել ուշ ներկայացնող ընկերության անվանումը: Այսպիսով, կարող է հարց ծագել, թե ինչու ուշ ներկայացված հայտը չի մերժվել ՀՄՀ-Հայաստանի կողմից: Մեկ այլ խնդիր կապված է այն հարցի հետ, թե արդյոք ուշացված հայտը ներկայացվել է հենց այն ընկերության կողմից, որը հետագայում ճանաչվել է որպես հաղթող:

Գնահատում

Մրցույթային հայտերի գնահատման փուլում բացահայտված խնդիրներն առնչվում են գնումների ուղեցույցներում և/կամ հայտերի ներկայացման համապատասխան հրավերներում առաջադրված պահանջների խախտումներին:

- **Ավտոմեքենայի** գնման դեպքում ՀՄՀ-Հայաստանն ընտրությունը կատարել է ներկայացված երկու գնային առաջարկների արդյունքում, չնայած որ պահանջվում է երեք առաջարկ: Գնահատման հաշվետվությունը նշում է, որ գնային առաջարկ ներկայացնելու հրավերում նշված 30 օրվա փոխարեն ընկերություններից մեկն առաջարկել է ապրանքն առաքել 45 օրում: Այս գնային առաջարկը չպետք է, որ հաշվի առնվեր և գնահատվեր կամ համեմատվեր մյուսների հետ, քանի որ այդպիսով մրցակցող ընկերությունների համար կիրառվել են տարբեր պայմաններ: Եթե առաքման համար 45 օրը ընդունելի էր ՀՄՀ-Հայաստանի համար, այն պետք է տեղեկացներ բոլոր մասնակիցներին նախապես և խնդրեր, որ նրանք գնային առաջարկ ներկայացնեին առաքման նոր ժամկետի համապատասխան: Արդյունքում, կարող էր ավելանալ մասնակիցների թիվը և նվազեր պայմագրի գինը, հատկապես հիմք ընդունելով այն, որ առաքման ժամկետը և դրա համար ընտրված

փոխադրամիջոցը ուղղակի ազդեցություն ունեն ապրանքի գնի վրա: Սա կարող էր նաև հանգեցնել մեկ այլ մատակարարի ընտրության:

- Ինչպես նշված է **Վեց մայր ջրանցքների նախագծման և շինարարության վերահսկման** ծառայության գնման գնահատման հաշվետվության մեջ, հաղթող ընկերության՝ «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի թույլ կողմերից մեկն է համարվել այն, որ այս ընկերությունը յուրաքանչյուր առաջնային ջրանցքի համար նախատեսել է մեկ ղեկավար աշխատող 18 ամսով այն դեպքում, երբ շինարարության ողջ ժամանակահատվածը 36 ամիս է: Սա նշանակում է, որ կապալառուն չի կարողանալու իրականացնել պայմանագիրն այնպես, ինչպես առաջադրված է հայտի ներկայացման հրավերում: Որպես հաղթող ընկերության մեկ այլ թերություն է նշված այն, որ դրա աշխատախմբերի ղեկավարները քիչ փորձառություն ունեն առաջնային ջրանցքների նախագծման գործում: Նման հայտարարությունները բնականորեն հարցականի տակ են դնում գնահատման արդյունքները և օգտագործվող չափանիշները:

- **Ազդեցության գնահատման նպատակով գյուղացիական տնտեսությունների հետազոտության** գնահատման հաշվետվության մեջ, որտեղ ընտրությունը ենթադրաբար պետք է կատարվեր՝ հիմք ընդունելով միմիայն խորհրդատուի որակավորումը, նշվել է, որ հաղթող կոնսորցիումը՝ «ՁԵՆ Քոնսալթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՍՊԸ) և «Արեգ» ՀԿ-ն ունեին «Հայաստանի գյուղական վայրերում անցկացված սոցիոլոգիական հարցումների միայն սահմանափակ փորձ»: Այսինքն, այն դեպքում, երբ ընտրված մասնակիցը պետք է ունենար առանձնահատուկ փորձառություն այս ոլորտում, պայմանագիրը շնորհվել է մեկին, որն այն չի ունեցել: Հետաքրքրական է, որ այս մասնակցի ոչ միայն ընդհանուր գնահատականն է եղել առավելագույնը, այլև նա ստացել է ամենաբարձր միավորները առանձին վերցված յուրաքանչյուր չափանիշի համար:

- **Բնապահպանական և սոցիալական գնահատման և վերահսկման** մրցույթի հայտ ներկայացնելու հրավերով աշխատակազմի լեզվական հմտություններին ներկայացվող պահանջներով սահմանվել է, որ հիմնական աշխատակազմը պետք է «անգլերեն իմանա վարժ, հայերենի

և/կամ ռուսերենի սահուն իմացությունը ցանկալի է»: Մինչդեռ, գնահատման ընթացքում որպես չափանիշ օգտագործվել է միայն հայերենի և ռուսերենի իմացությունը: Այսպես օրինակ, հայտ ներկայացրած երկու ընկերություններից մեկի (չընտրվածի) ջրային ռեսուրսների կառավարման/պլանավորման մասնագետի թերություն է համարվել այն հանգամանքը, որ նա չի իմացել «պահանջվող» լեզուներից ոչ մեկը՝ հայերենը կամ ռուսերենը:

Այլ

Գնումների փաստաթղթերի ուսումնասիրության ընթացում նկատվել են այլ խնդիրներ ևս.

- **Ազդեցության գնահատման նպատակով գյուղացիական տնտեսությունների հետազոտության** գնման պայմանագրի նախագծի համաձայն ՀՄՀ-Հայաստանը պետք է աջակցություն տրամադրի խորհրդատուին վիզաներ ձեռք բերելու համար, մինչդեռ ուսումնասիրված փաստաթղթերից հասկանալի չէ, թե ինչ նպատակի են ծառայում վիզաները, եթե հարցումն իրականացվելու է Հայաստանի տարածքում Հայաստանում գտնվող կազմակերպությունների կողմից: Այնուամենայնիվ, եթե խորհրդատուն նախատեսում է մեկնել արտասահման կամ պայմանագրի իրականացման նպատակով ներգրավել ոչ Հայաստանի քաղաքացիների, տրամաբանական կլիներ, որ փաստաթուղթը դրա մասին պարունակեր ավելի հստակ տեղեկություն:

- **Բնապահպանական և սոցիալական գնահատման և վերահսկման** մրցույթի գնահատման հաշվետվությունը պարունակել է անհամապատասխան տվյալներ, որտեղ երկու տարբեր օրեր են նշվել հայտի հրավերի հրապարակման ամսաթվերի համար: Փաստաթղթի տարբեր մասերում որպես «Development Business»-ում հրապարակվելու ամսաթվեր նշված են 2006թ. դեկտեմբերի 23-ը և 2006թ. նոյեմբերի 1-ը: Իսկ «Հայաստանի Հանրապետությունում» հրապարակման համար նշված ամսաթվերն են 2006թ. դեկտեմբերի 23-ը և 2006թ. նոյեմբերի 4-ը:

- Գնման նշված դեպքի համար հայտի ներկայացման հրավերը պարունակել է անհամապատասխան տվյալներ վճարման ժամանակացույցերի վերաբերյալ. Պայմանագրի հատուկ պայմաններում նշված է, որ ՀՄՀ-Հայաստանը կապալառուին վճարելու է պայմանագրի գնի միայն 33%-ը, իսկ նույն փաստաթղթի հավելվածում ներկայացված վճարման ժամանակացույցը նախատեսել է 100%-ով վճարում:

- Նույն այս գնման դեպքում դիտարկվել է շահերի բախման հնարավորություն, երբ հայտի հրավերն առաջարկել է, որ մասնակիցները գնումների ընթացակարգի հետ կապված իրենց բողոքներն ուղղեն հենց այն անձին, որը կազմակերպում է գնումների գործընթացը, և ոչ թե մեկ այլ անկախ անձի:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նկատի ունենալով գնումների ընթացքում բացահայտված վերոնշյալ թերությունները և հնարավոր կոռուպցիոն ռիսկերը՝ ՏՁԿ/ԹԻ-Հայաստանն առաջարկում է ՀՄՀ-Հայաստանին ձեռնարկել քայլեր՝ բարելավելու գնումների գործընթացները և դրանց թափանցիկությունը հետևյալ միջոցներով.

- *Գնումների ուղեցույցների* համալիր, օգտագործման համար դյուրին և հրապարակային փաստաթղթի մշակում.

- *Գնումների պլաններում* նախատեսվող գնումների իրականացման ժամանակացույցի և նախապես հրապարակված գնումների կարգավիճակի վերաբերյալ տվյալների ընդգրկում ու պատշաճ ժամանակին տեղադրում ՀՄՀ-Հայաստան ինտերնետային կայքում.

- ինչպես մրցակցային, այնպես էլ ոչ մրցակցային գնումների պայմանագրերի վերաբերյալ տեղեկության տեղադրում համապատասխան ինտերնետային կայքում.

- մրցույթային հրավերի և դրա համապատասխան բաղադրիչների, ներառյալ՝ բնութագրերի և ընտրության չափանիշների, ճշգրիտ կազմում՝ ապահովելու պատշաճ մրցակցությունը և հայտերի գնահատումը.

- գնումների ուղեցույցների և մրցույթային հրավերի պահանջների խստորեն իրականացում մրցույթների կազմակերպման և հայտերի գնահատման գործընթացներում.
- գնումներին առնչվող փաստաթղթերում առկա տվյալների ճշգրտության ապահովում.
- շահերի բախման կանխարգելում գնումների ցիկլի բոլոր փուլերում: